

ՀԱՅ

ՍԿԱՈՒՏ



ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Կ.Մ.Ը.Մ.
Hai Scout Organe des
SCOUTS ARMÉNIENS

ՀԱՍՅԷ - Խորասանճեան Խան, Թի. 26, Սրբէքի և Պոլիս
ADRESSE - Khorassandjian Han, 26, SirKédji Constantinople

Հեռանայն Ար. 2146

ԲԱԺՆԵԳԻՆ

Telephone թ. 2146

F. ՏԱՐԻ ԹԻ 19


Պոլիս և Չամա Տրէ, 772 120

Արասանճեան . Տր 15

Ամերիկա . Տր. 150

1-15 ՄԱՅԻՍ 1922

ԿԱՂԱԳՐՈՅԻ (Հնդկաստ) ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ՊԵՋՈՒՅԻ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՄԷՋ



ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐ

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷՔ

“ԲԱՆԱԿՈՒՄ ՅՈՒՑԱՅԱՆԴԷՍ,,Ի

որ սեղի պիտի ունենայ

Ե՛րբ, ո՛ւր, Կա ինչպէ՛ս...

ՊԱՏԱՍԻԱՆԸ ՅԱԶՈՐԴՈՎ

ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

Սկառուտական գիտելիքներուն տեսականէն ետքը, գործնական կիրարկութեանց վարժուելով, ապագայ առաջնորդք երբ օրդ մը զանոնք իր խմբակին բացատրելէ վերջ գործնականով ցուցնելու մէջ չի տատամսի և յանդուգն կերպով փորձեր կատարէ, արդէն ապահոված կ'ըլլայ իր ազդու գիրքը խմբակին վրայ: Խմբապետը պարտաւոր է ամէն գիւրութիւն տալ իր առաջնորդներուն և առաջնորդի օգնականներուն որպէսզի անոնք կարենան ձեռք բերել սկառուտական բոլոր ծանօթութիւնները և կարող ըլլան գիւրաւ զանոնք գործադրելու: Խմբապետին ամենէն մեծ հողը այս պէտք է ըլլայ, իր գործը ապահովելու համար կրնայ և նոյն իսկ պարտաւոր է շարաթական երկու երեք հաւաքումներով՝ զբաղել միայն առաջնորդներով և օգնականներով, անոնց դասախօսելով, առաջնորդելով ընթերցումներով բացատրելով, իսկ սկառուտական խմբակային հաւաքումներով խմբակին առաջնորդք նոյն սորվածները պէտք է ուսուցանէ հաճելի կերպով իր սկառուտներուն: Որպէսզի ճարպիկ, հասուն առաջնորդներուն հնանք ամենէն առաջ խմբապետը պէտք է հայթայթէ իր առաջնորդներուն սկառուտական գիրքեր, թերթեր, պրօչիւրներ, Եթէ անոնք օտար լեզուաւ գրուած ըլլան կրնայ խումբին մէջ նոյն լեզուին ծանօթ առաջնորդի մը կամ սկառուտի մը թարգմանել տալ, զանոնք կարգալ առաջնորդներուն հաւաքումի պահուն, նոյն նիւթի մասին կարծիքի փոխանակումներ կատարել: Առաջնորդները և փոխանորդները միշտ ազատ յարաբերութեան մէջ պէտք է ըլլան սկառուտական խնդիրներու մասին խմբապետին հետ:

Խմբապետը իր կարգին ամէն բանի տեղեակ, ամէն կարողութեամբ օժտուած մէկը չէ հարկու, բայց ինքն այ իր կարգին կրնայ իրմէ աւելի ձեռնհաս մարդոց հետ խորհրդակցիլ, գիրքեր կարդալ և օտար խմբապետներու հետ թղթակցութիւններ կատարել: Զանազան մասնապիտութեանց մէջ իր առաջնորդները զարգացնելու համար կրնայ զործին համակիր մասնագէտներու գիւմիլ: Մասնագիտութեանց մէջ մասնաւորաբար ուշադրութիւն զարձնելու է որ մասնագիտութեանց պահանջները լրացնող պարագաներուն գոհացում տրուի:

Որպէսզի ամէն բանէ առաջ խմբակներու դրութիւնը կարենանք հաստատել մեր խումբերուն մէջ պէտք է որ ամէն խմբակ ունենայ իր ուրոյն վրանը, ճաշի պատրաստութեան առարկաները, իր գործիքները այսինքն սղոց կացին, բահ: Ասոնց միջոցաւ նախ կրնայ ապահովել իր անկախութիւնը: Վրանի կեանքի ժամանակ պէտք է ապրի ի վրանին տակ, իր ճաշը պատրաստէ իր սանին մէջ, որուն գիւրատար ձեւերով և թերթիւ ու աման տեսակէն կարելի է գնել սկառուտական պիտուքներ ծախող եւրոպական մեծ առններէն: Սկառուտը իր ձեռներէցութեան ոգին միայն վրանի կեանքով կրնայ զարգացնել, պէտք է ջանալ և զանազան օգտուելով ստէպ ապրիլ վրանի տակ, աւելով ապրելու անկախութիւն խմբակներուն: Խմբակներու վրանները պէտք չէ որ գինուորական ձեւով քովէ քով շարուած ըլլան, ընդհակառակը հողին ծալքերուն համեմատ իրարմէ ներելի եղածին շափ հեռու տախարակ վայրի 50-100 մէթր հեռաւորութիւն մ'ունենայու են: Խրմբապետը իր օգնականին հետ վրանով անոնց մէջտեղը կ'որոշէ իր տեղը: Ամէն առաջնորդ պատասխանատու է իր վրանի գիրքին, կանգնելու ձեւին, մաքրութեան և մանաւանդ կարգ ու սարքին: Ըճաշի պատրաստութիւնն այ իր կարգին խմբակային կ'ըլլայ, և նոյն իսկ հոս խմբապետները կ'որոշեն թէ օրու ան վրանի կեանքի ճաշի և լոյսի ծախսը ամէն սկառուտի համար նուազ գումար մը պէտք է ըլլայ օրինակի համար: Ըճաշի ընտրութիւնը կը ձգուի առաջնորդներուն որոնք իրենց սկառուտներուն ճաշակին համեմատ կ'աշխատին աւելի լաւ և սննդաբարար ճաշը պատրաստել: Խմբապետը ամէն ինչ կը քննէ և իր պատուոյ տետրակին մէջ կ'արձանագրէ առաջնութիւնը այս կամ այն խմբակին, նոյն իսկ իր վարձատրութիւն խումբին դրօշակը պահելու իրաւունքը անոր կուտայ: Մինչեւ այս մեթոտին ապահովումը խմբապետը կրնայ ճաշը պատրաստել տալ խումբակին, մաքրութեան հողը յանձնել ուրիշ խումբակի մը և փոխն ի փոխն շարունակել այս դրութիւնը:

Հուանաբար այս տողերը կարդալէ վերջ շատեր համաձայն ըլլան խմբակներու դրութեան գործադրութեան, բայց միւս կողմէ գանազան պարագաներ մէջ բերելով առարկին թէ անկարելի է գործադրել զայն: Օրինակի համար ոմանք առարկեն թէ իր խմբապետ շարաթական քանի մը հաւաքումներով առաջ-

նորդները խիստ զբաղած ըլլալով չեն կրնար ներկայ դանտիլ այս հաւաքումներուն: Ասոնց պատասխանելը շատ դիւրին է, անկարելի է ամէն կատարելութիւններով օժտուած խումբ մը գտնել, բայց հայ սկաւտաին աննկուն կամքը շատ դիւրաւ կրնայ յաղթել այսպիսի դժուարութեանց: Իրիկուան քիչ մը ուշ քննալ, սուսօտուն կանուխ արթննալ, կիրակի օրէն քանի մը ժամ, շողենալի կամ շոգեկառքին մէջ անյուշած մեր պարտալ ժամերէն օգտուելով արդէն կը տիրանանք մեր նպատակին: Խմբակներու գլուխները ինչպէս տեսանք տեսական սկզբունքներու վրայ հիմնուած սկզբունք մը չէ այլ ընդհակառակը գործնական կիանքով նպատակ ունի ձեռներեց և պատասխանատուութեան գիտակից քաղաքացիներ նուիրել հայրենիքին:

Հին խումբներուն այս սկզբունքին կիրառութիւնը շատ դժուար ըլլալը ընդունելի չէ քանի որ սղոք դիւրաւ կրնան փոխել իրենց կեանքը: Փոխանակ չոր ու ցամաք խոշոր սկզբունքներ կիրառելու տղոց կրնանք անոնց առանց զգայնելու իրենց կեանքին բարելաւումը, խմբակներու գլուխեամբ իրենց կողմէ իսկ պարտադրուած պարտականութեան մը գիտակցութիւնը տալ անոնց: Պարտականութեան հետ զուգորթաց կ'առաջանայ անշուշտ պատասխանատուութեան զգացումը:

Այսպէսով սկաւտը, գիտակից իր պարտականութեան, պատասխանատու իր գործին, նախանձախնդիր կը դառնայ իր կեանքին և իր խմբակի կեանքին և գործին: Որովհետեւ այլեւս կը մտածէ թէ ինք ժաման է խմբակին իսկ խմբակը խումբին, կ'զգայ որ իր գործը խմբակին, խումբին գործն իսկ է: Խումբին գործունէութեան աւելի զարկ տալու ջանադիր կ'աշխատի քիչ ժամանակի մէջ շատ արդիւնք ձեռք բերել: Արդէն երբ սկաւտ մը այս մակարդակին հասնի, խումբը կը դառնայ իսկապէս սկաւտական խումբ մը և խումբին յառաջացման բոլոր ազդակները կ'սկսին բնականօրէն շղթայաբար իրարու յաջորդել:

Այսօր մեր այս ընդհանուր և մասամբ անկատար հայեացքէն վերջ, յառաջիկային պահելով սոյն գիրքին թարգմանութեան հոգը, ըսենք թէ խմբակը պէտք է ունենայ իր սընտուկը ուր գտնուի խմբակին դրամը որ զանազան ձեռական աշխատութեանց վաճառումէն գոյացած պէտք է ըլլայ, պէտք է ունենայ նաեւ խմբակին բոլոր անդամներուն անձ-

նական խնայողութիւնը: Խմբակին դրամը կը մնայ գանձապահին քով և առաջնորդը կ'ունենայ սնտուկի տետրակ մը: Առաջին տեսակի խնայողութեամբ կը գնուին խմբակին վերաբերեալ պէտքերը որոնց մէկ մասը շատ անգամ ամէն սկաւտ կը վճարէ իր անձնական խնայողութենէն, ինչպէս վրանի, սանի, կացինի, սղոցի, լասրարի, ձեռական աշխատութեանց գործիքներու գնում: Իսկ երկրորդ տեսակի խնայողութեամբ ամէն սկաւտ կրնայ գնել իրեն անձին յատուկ սկաւտական սովէն ինչ, նաեւ առաջնորդին հրամանով կրնայ նաեւ իրեն անձնական և առողջութեան հետ կապ ունեցող նութեան գնումներ կատարել: Այսպէսով խմբակը ինք իսկ կը հոգայ իր պէտքերը, որով աւելի կը գուրգուրայ դժուարաւ ձեռք անցուցած իր պիտոյքներուն վրայ:

ՊԻՄԷՆ ՍԱՀԱՅՃԵԱՆ

ԼՍՈՒՍՏԵՍ ԿԵԱՆՔԸ

ՋՈՒԱՐԹՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԻ ՄԷՋ

Գործի մէջ զուարթ ըլլալը սեւէ կոշուծի արգելք չի հաղիսանար, ընդհակառակը այսպէսով մարդ շատ աւելի օգտակար կրնայ ըլլալ: Այս զուարթ բնաւորութիւնները կարողութիւններ յայտնաբերելու ու լեզուներ քակելու ուժը ունին: Առողջութեան ձրի ընդհարութիւններ են որոնք ընդհանուրին բարբորութեանը հոգ կը տանին:

Որքան որ պէտք է մշակենք ապրուստ մը շահելու կարողութիւնը, նոյնքան ալ զուարթութեան կարողութիւնը: Կատակասիրութեան ընդհանրացումը իր կարեւորութիւնը ունի: Մեր պարտականութիւնն է մշակել զուարթասիրութեան կարողութիւնը որչափ թուարանական կամ լեզուաբանական կարողութիւնները: Մարդկային բնութեան մէջ անիկայ առաջնորդուած է ըլլալ ամենագորաւորը և ոչ թէ ամենատկարը: Մտքին մեծ զեղն է անիկա ու բարձր թոխիք սուտը:

Երիտասարդութեան մէջ զուարթ ձգտումները զուարթ պարզապէս մեղանշել է: Մանուկ մը երբեք պէտք չէ լուրջ ու արուր զէմք մը ունենայ: Անիկա Աստուծոյ ծրագրին հակառակ է: Սակայն կան մարդիկ որոնք ինդալու կարողութիւններ կորսնցուցած են: Անոնց համար կատակասիրութիւնը սկաւտութիւն մ'է: Անոնք կրտսն թէ կեանքը լրջօրէն պէտք է առնենք: Այս մարդիկը աշխարհիս աղէտներուն



Բերայի վեներիկեան մսիքարեան վարձարանի սկաուտները արշաւի միջոցին:

Ճանրութիւնը կ'զգան և պատասխանատուութեամբ քեանաւորուծ են: Չեն կարող ըմբռնել թէ ինչպէս կարկի է կեանքը այսքան զուարթօրէն դիտել: Այն տպաւորութիւնը կը թողուն թէ եթէ իրենք չըլլային աշխարհ կանգ պիտի առնէր: Անոնք լուրջ ու վշտաբեկ են, իբր թէ աշխարհ իրենց ուսերուն վրայ հանգչէր:

Զուարթ մարդիկը ոչ միայն ամենաերջանիկը, այլ ամենէն երկար սպորտ, ամենաօգտակար ու ամէնէն յաջողներն են: Մարդկային կեանքի մէջ այս զուարթասիրութիւնը, այն բնական հրեման է որ կեանքի մեքենան կը իւզոտէ ու կը հարթէ այն դժուարութիւնները՝ որոնք այնքան կեանքեր կը մաշեցնեն:

Վիտիա Մարրա Չայլա կըսէր. «Ամէն պարագայի զուարթօրէն կը խոհեմ: Պատահանէս պիտմակներ կը կախեմ որպէսզի սենեակս ծիրանի դօտիներով լեցուի»: Ասիկա ճշմարիտ փիլիսոփայութիւնն է, մտքի գեղը ու մարմնայնայն ամենալաւ սպեղանին:

Բարեբախտութիւն մ'է, ամեն բան պայծառ տեսնել կը նախընտրեմ զուարթութեան միլիոնաւոր մը ըլլալ, քան տողարներու:

Ինչ ոչ ըլլայ քու գործը, սորվէ ամէն տեղ երջանկութիւն գտնել: Զուարթութեան սէրը ուրիշ ու է կարողութեան նման կրնայ մըշակուիլ, ու գործնական կեանքի մէջ զպրօցի կրթութիւնէ մը աւելի օգտակար պիտի ըլլայ քեզ:

Ասիկա հարստութիւն մ'է որ ամէն ոք

կրնայ ամբարել — ուրախութեան հարստութիւնը: Արքան դժուար ըլլայ գործը, որքան մութ երեւի քեզ օրը, եթէ աշխատութեան մէջ քիչ մը զուարթութիւն գտնուի, ամեն ինչ պիտի թեթեւցնէ զայն եթէ օրուան մէջ կարենաս լաւ մը խնդայ, գործը այնքան ծանր չպիտի թուի: Լուրջ ու ախար բնաւորութեամբ ոչ միայն ապագայի կ'ըլլաս ուրիշներուն, այլ քու գործը շատ ծանր կը թուի քեզ: Արքատակին ծրարը մը մոռցնել կու տայ հոգերը, կասկածները ու ժառնգութիւններ: Այն որ կատակ մը չ'ըմբռնէր կամ միշտ ախար է, մեզ շատ կը ձանձրացնէ:

«Լաւագոյն է շատ փոքր միտք մը քան շատ լուրջ»: Տուէք մեզ ցնծութիւն մը որ երկաթի շրջանակէ մը իսկ մեզ դուրս կը հանէ:

Թարգմ. Թ. Ո. ՕՐԻՋՆ ՍՈՒԷԹ ՄԱՐՏԵՆ
Արեւելեան (Մամուլ)

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

Բոյոր խմբապետներու, աւաջնորդներու եւ սկաուտներու ուսադրութեան:

Սկաուտներու կեդր. Զանձնախումբը կը յայտարարէ որ՝ քերթի շրջաբերականներու կամ մասնաւոր պրակներու միջոցաւ տուած պատշաճ ֆրանկացիներէ դուրս, ո՛ր է կ. պայմանագրական նշաններ, ձեւեր, օրէնքներ եւ միջոցներ օրինական չեն համարուիլ եւ անոնց ծանօթութիւնը ո՛ր է կեդրոլ պատշաճօրիչ չ'են սկաուտներու համար եւ մաս չի կրնար կազմել սկաուտական ֆնկտիան:

ԿԵԴՐ. ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԶԱՆԶՆԱՆՈՒԲԲ



"Երբ որ Բանք"

Պատմումք՝ Լ. ՍԱՐԳՍԻԱՆ

Պատկերներ՝ Ա. ՍԱՐԳՍԻԱՆԷ

Եթէ այս պատմութիւնը լսէր այն անձը, որ ահամայ դերակատարը եղաւ անոր, ժտած եւ թէ պիտի յուզուէր, բորբոքէր, ու ահնայները իր արծուային քիթին վրայ հաստատելով՝ ուռնդերը ուսեցուցած, պիտի գոչէր։

«Մէկ օր բանտ անկառնականութեանը համար»
Այդ անձը մեր հին գարբոյնն անօրէնն էր իսկ բանտը անոր պատժասենակիւր Ամէն անգամ երբ իր աշակերտներէն մին յայնչանքի մը մէջ բռնուէր, և կամ, ժանաւանդ, տեսներ Դիւառեանը. — վիտասան Դիւառեանը, ինչպէս կ'անուանէինք զայն, իր չուրջ հաւարած մեղի նման միամիտ մանուկներ, գողերու կեանքէն, աւագակներու գործերէն զբուռուցներ կը պատմէր։ Անոնք մեր պարտոյ ժամերը հանոյալի ընելով մեր երեւակայութիւնը կը ստէ։ Այդ զբուռուցները, Դիւառեան կը քաղէր միմիայն իրեն յատուկ գրքերու մէջէն, որուն ոչ ոք իր ընկերներէն իրաւունք ունէր գոչելու։ Ան կը պատմէր իր սովորական ոգեւորութեամբ, յարատեւ շարժուածքներով և ձայնի ելեւէջերով, վերջապէս պաշտօնապէս արգիլուեցաւ այս բանը անօրէնին կողմէ։ Գողեր, աւագակներ, օ՛, անօրէնը կ'ատէր զանոնք ամէնքն ալ կարելի էր միթէ անոր զիմաց խօսքն ընել այդ շարագործ վատ մարդոց, որոնք մարդկութեան գայլեր էին ... հրէշներն էին ... ևս իսկ պիտի չ'աւարտակէի պատմել հաս այն լանդուրօ գէղքը որ պատահեցաւ մեղի զգրբոյնն մէջ, եթէ հողի թանձր խաւ մը չ'ածիկէր այսօր մեր ձերբակալներ յոգնատանջ և վատարեկ սկիորներուն մնացորդները։

— Մինչև այս տարիքս հասնելու, կը կրկներ ան շարունակ, իր մօտեքի ախներ կոյտը թօթափելով, մինչև այս ձերբակալ հասակիս, երբեք չ'եմ հանդիպած այդ շարագործներէն մեան։

— Ձէի՞ք հանդիպած երբեք։ Բայց պիտի հանդիպէիք անոնցմէ մէկուն, պատուական անօրէն, և պիտի գտնուէիք անոր այնքան մօտ։

Բարեբախտաբար նման արձակուրդի մը պատահեցաւ այդ «շարաշուք» գէղքը, որով վարժարանի համար եղած այս լանդուրօութիւնը, ինչպէս ինք որակեց զայն, իմացուեցաւ միայն տասն և հինգ աշակերտներէ, որոնք իրբեւ հետաւոր վայրերէ եկող գիշերահայներ, արձակուրդի ընթացքին զպրոց կը մնային։ Ասանց մէջ էի նաև ես։

Մեր սովորական հաւաքավայրը դասասրահ մըն էր, որ կը գտնուէր աշակերտներու ննջարանին ճիշդ տակը այնպէս որ հան առաջնորդող սանդուխտներու դասարանի գոնէն քանի մը քայլ անդին էր։ Մեր տրամադրութեան ըստ գտնուող քանի մը պարզ առարկաներու մէջ կար նաև հին ու կիսամաշ վատարան մը, որուն մէջ օրօր բուն առաս

կրակ մը վառելով ձմեռային օրերուն կը համախմբուէինք անոր շուրջ։ Եւ որովհետև ժիւնի ու սառոյցի այդ տաղտկալի ժամանակը շատ ծանր կը յառաջանայ, ու հեքեայթներն ու պատմութիւնները կարծես պահանջ մը կը գտնան, մենք սիրով մտիկ կ'ընէինք Դիւառեանը ժամերով անոր շուրջ։ Թուրքներէն կախուած մնալով չ'օգ չէ թէ երբեմն մեր մանկական մարմիններէն սառստերներ կը սանչներ անոր պատմութիւնները, երբ քոտմեղի մանրամասնութեանց մէջ կը մտնէր։ Կոչ չէ թէ զարձեւ մեր երեւակայութիւնը այն ատրիճանի կը զբոսուէր որ գիշերը, մթութեան մէջ, ննջարան երթալու կը վախնայինք. բաւական էր միայն որ չ'ունէինք ուրիշ վախ մը, այն է՝ անօրէնը։ Արձակուրդի օրերու համար բացառութիւն մ'ըլլալով զիտէինք որ ձերբակալներ պիտի չ'զար գաղտագողի, ստքերուն ծայրերուն վրայ քալելով, ու ձեռքերը խաչած և ուրծքին վրայ դրած՝ պահ մը աննկատելի կերպով մտիկ ընելու և վերջէն անկողնի վրայ կեցելու ուռնդերն ուսեցուցած բարեգութեամբ գոչելու։

— «Դիւառեան» մէկ օր բանտ անկառնականութեանը համար»

Սր մը միայն Դիւառեան բացակայ էր հաւաքոյթիցն, և այդ օրն ալ ձանձրոյթը մօտէր էր մեր մէջ։ Ժամանակը կարծես չէր յառաջանար և մենք ի զուր կը ջանայինք օ և է գրադուր մը գտնել ժամացի համար։ Ճիշդ է որ քանի մը հողի ընթերցանութեան մէջ միտքուած կ'երևային, որ իշներ կը գրէին և մաս մըն ալ «կատուներու» խումբը, վատարանին շուրջ բորբոքած անհամօրէն կը սրախօտէր։ Բայց անոնք — մէնքն ալ ուրախութեամբ կը լքէին իրենց գրադուրը և տեղերէն կը ցատկէին, եթէ պատահմամբ Դիւառեան երեւան ելլէր։


Ձմեռային կանխահաս միութիւնը և մինչև այդ ժամանակ տիրող բութիւնը կը սկսէր խանդարտիլ գիրքն ու գրիչը մէկ կողմ ձգող աշակերտներուն խօսակցութեան սկսելովը։

Սր մը, ճիշդ այդ պահուն, ննջարանի մէջ աղմուկ մը մեր ամէնուս ուշադրութիւնը գրաւեց։ Չօրաւոր ոտնաձայներ էին անոնք որոնք մէկու մը վազելը կը յայտնէին Այդ աղմուկը անցաւ ամբողջ ննջարանի մէջէն, իջաւ սանդուխտները, դասարանին գուռը յանկարծ ուժգնօրէն բացուեցաւ և վերջապէս կայծակի արագութեամբ սղայ մը դասարանէն ներս ինկաւ, կրտսերագոյն աշակերտներէն մին էր այդ՝ վարդանը, որուն գէմքը առեկիտէն տոգու-

նած՝ ու մարմինը կը դողար կարելի չէր մէկ անգամէն գուշակել թէ ինչ էր պատահածը. ամէնքնես ալ ձգելով գրողու՛մը, մինչև իսկ վառարանը, հաւարուեցանք սարափանար բնկերով շուրջ, ու վահէն, մեր երկցագոյն բնկերը, «մեծ» ք յառաջ անցնելով, գայն հանդարտեցնելու շանայով մէկտեղ ուզեց հարցաւորընել գայն: Յու գո. մէն և սարափէն խեղճ փորրիկը կը հեւար իրեն ուղղուած հարցաւմեկուն պատասխանները շիրցաւ տալ այլ միայն՝ բաւ մը թաւաւ անոր բերնէն և այն էր.

— Դո՛ղը . . .

Ամէնքս ալ իրարու երես նայեցանք ձիւղ է որ այդ միակ բաւը կը բացատրէր տղուն սարափուր, բայց մեր շեռաքրքրութիւնը և երեւակայութիւնը յանկարծ գրգռուեցան.



ԱՆԱՂՄՈՒԿ ԵՒ ԱՆՇՇՈՒԿ ԵԼԱՆՔ ՍԱՆԴՈՒՆՆԵՐԷՆ ՎԵՐ...

— Ու՞ր է բակ՝ հարցուց վահէ, երբ վարդան քիչ մը հանգարտեցաւ, բակ շուտով.

Այն ատեն տղիկը գանգաղ շարժուեմով մը մատը վեր վերցուց և հազիւ լսելի ձայնով մը պատասխանեց.

— Կնջարանին մէջ:

Վայրկեան մը խորին լռութիւնս Ամէնքս ալ սկսանք խորհիլ:

— Տնօրէնին խնայելու է, առաջարկեց մին, խորհուրդը ձիւղ էր, իրաւունք ունէր գայն յայտնողը, բայց այնքան իրաւայի էր նաև երկրորդ մը, որ կարեկցարար բացակայուցից:

— Ինչո՞ւ անօրէն, կ'երեւակայեմ իր վիճակը, երբ վերջապէս տեսնէ գոլ մը, որուն երբէք չէ հանդիպած:

— Ընելիքնիս որոշ է, լռուեցաւ յանկարծ, տիրող ձանր վահէինն էր, և երբ ամէնքս գարձանը անոր, ան՝ ուզից և հրամանատարի գիրք մը առնելով, վճռական շնչոտով ար-

տատանեց. Ո՛չ բարեկամներ, պէտք չէ խնդրիք իմացնել մեր անօրէնին և այսպէսով գոլ հանել պատուական ծերունին, որ ինչպէս գիտէք, կը խորհի գողերէն անուց անուէն իսկ կը սարսափի Պէտք չէ գիմել ուրիշներու Տասն և հինգ հօգի ենք հոս եկէք, միանանք և անձնական բաջուձեւածը գլուխ հանենք գոլիլի գործ մը, իւրաքանչիւրի ձեռքին մէջ մէյ մէկ գաւազան բուսական է իր թագստոցին մէջ ձերբակալելու այդ շարապործը, որ ո՛վ գիտէ այս պահուս որու իրեկենն'ըը յայրըտակելու վրայ է: Համամի՞տ էք ինձիս Սն ու բնմն, վայրկեան մ'իսկ կորսնցնելու չէ. հետեւեցէք ինձիս:

Մտածելու միջոց չկար. կամ պէտք էր հետեւիլ, կամ ոչ, ամանք սկսան գանգատիլ թէ գուրք ստապիկ ցւարտ է, ուրիշներ կ'առարկէին թէ անհետաձգելի կարեւոր նամակներ ունէր գրելիք. իրականութիւնն այն էր սակայն, որ ամենքնիս ալ կը վախճայինք անխօսեմարար նետուելու տրկամի՛նը մէջ որմէ խուսափիլ այնքան զխրին էր քիչ մը քաջութիւն ստանալու համար, պէտք եղաւ յիշել Դեւատեանի պատմութիւնները, Նախ անոր ամենահաւատարիմ ուկնդիրները, յետոյ մնցեալ աշակերտները, բնրուելով վահէին խօսքերուն ճշմարտութիւնը, իրենց սրտումը տալին:

— Երթանք գոչեցին սնանք:

Երբ վահէ իր գաւազանը զիւցաղնարար օդի մէջ ճօճցնելէ յետոյ դուռ բացաւ և գուրս նետուեցաւ, ոչ որ մընաց գասարանին մէջ: Ամէնքն ալ գինուած առաջին հանդիպած առարկայով մը բլլայ բանակ, գաւազան, գմիլի. մինչև անգամ աւել մը և բահ մը. դոր ծառայի մը անհոգութիւնը գանցըրած էր նրբանցի մէկ անկիւնը, միացան խուսբին: Չբնեւացաւ նաև վարդանը որ ինքզինքը դրտած բլլալով ստաննեց ուղեցոյցի գերը վահէի քով, որ մեր անվիտելի առաջնորդն էր:

Մնացմուկ և անշուկ ելանք սանդուղիներէն վեր, ու մտանք ննջարանի նրբանցրին մէջ: Անոր երկու կողմերը իրարու քով շարուած նեղ խցիկները, կը կորսուէին հեռոջնեակ թանձրացող միտութեան մէջ:

Հակառակ այդ միտութեան և հակառակ անոր բնկերացող կծու ցուրտին, ստիբու ծայրերուն վրայ քալելով և առաջնորդուած վահէէն և վարդանէն, յառաջացանք նրբանցրի մէջ, մինչև որ այս վերջինը կանգ առնելով մատնացոյցը բաւ խցիկ մը և ցած ձայնով բաւ.

— Ահա հոս է գոլը . . .

Ամէնքս ալ կանգ առինք, խնդրոյ առարկայ խուցը ստիբրականներէն մին էր, և ամէնուն պէս ինքն ալ գրան տօրթին մասին վրայ բոլորակածեւ բացուածք մը ունէր:

— Դուն գոլը աչքովդ տեսա՞ր, հարցուց վահէ վարդանին, գրեթէ շնչալով:

— Ինչպէ՞ս չէ, պատասխանեց միւսը, նայեցէս ցած ձայնով, դուանը վարի ծակէն ինձի նայեցաւ:

սորսնական ձեւով մը: Եւ յետոյ՝ ներքէն շտեկներ լսեցի:

Մե՛նք ալ ականջներս սրեցնէր և մենք ալ իմացանք խշտութեան, որոնք ուրիշ բան ըլլալու չէին՝ բայց եթէ ոչ առարկաներ խառնելու ձայն մը, կասկած չկար. դողը տակաւին ներսն էր:

— Պատրաստ և զէն ի ձեռին, հրամայեց յանկարծ մեր առաջնորդը, առանց համարձակելու սակայն բարձրաձայն խոսելու: Պէտք է հիմայ կազմել կիսարտորակ մը սենեակին շուրջ: Ես պիտի բանամ անոր դռուը ու դուք ամէնքնիկ միասին պիտի խուժեք ներս, հասկցա՞ք, Սէն, սըրեմն:

Հրամանը կատարուեցաւ: Երազբուած կիսարտորակը կազմուելու համար հաստատաբայլ յաստիջ գացնէր, բայց երբ դռան մօտեցանք, զարմանք, մեր սկզբորութիւնը յանկարծ նուազեցաւ: Իւրաքանչիւր րոպէ որ սկսաւ անցնել, մեր բարոշական սեփին մէջ մէկ հարուած էր: Ես որ մինչեւ այն ատեն իմ պաղպրիճութիւնս պահած էի, սկսայ հարցնել ինչո՞ւ ինձի թէ արդեօք վահէ իր յատակադիւր պատրաստելու ատեն նկատի առած էր այն ծանր հետեւանքները որոնց կրնայինք հանդիպիլ ինքնապաշտպանութեան գիմող շարագործի մը զիմաց: Թերեւս մեր վախի պատճառը աւելի ցուրտն ու միտութեան էին որոնք մեր գործելու եռանդը կը կաշկանդէին, կամ զէնք՝ մը հեռապատկերը, զոր այժմէն իսկ կ'իրեւակայէինք իր ամենաառաւոր երեւոյթներով: Անհանգստութիւնն ու շտեկութիւնը գրեթէ ընդհանուր էր: Միայն վահէն էր որ տակաւին հաստատամիտ՝ կը ջանար պահել տալ լուսթիւնը, որ հեռզնեւէ խանգարուելու վրայ էր կասկածելի փոփոսքներով: Հազիւ նորէն լուսթիւն մը տիրած էր, երբ յանկարծ, անակնկալ կերպով լուսեցաւ ձայն մը, բարձր, կոշտ, ու խապտա:

— Քաշուեցէք ետ, ապա թէ ոչ...
Շարունակութիւնը 21 թղ թիւով

ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳ. ՀԱՄԱԺՈՂՈՎ ՄԸ ԲԱՐԻՁԻ ՄԷՋ

1. — Պատուիրակներ. — Յարգ Միջազգային գրասենեակը արձանագրուած իւրաքանչիւր կազմակերպութիւն առառաւելն 5 պատուիրակ պիտի զրկէ: Կը թելադրուի որ պատուիրակներն մասնագէտներ ըլլան սկաուտական գործին կը խնդրուի սկաուտական համադրեալ կրել:

2. — Ժամանում. — Պատուիրակները պարտաւոր են Բարիդ հասնիլ շարաթ որ, 22 Յուլիս 1922:

3. — Ընդունելութիւն. — Կազմակերպել յանձնախումբը, որ կը ներկայացնէ Ֆրանսական 3 միացեալ կազմակերպութիւնները կը փափաքի հիւրընկալել համաժողովին պաշտօնապէս հրաւիրած պատուիրակները:

4. — Գրամական խնդիր. — Ֆրանսական կազմակերպել յանձնախումբը կը ստանձնէ

ընդունելութեանց, պատշաճերու, հանդէսներու ծախքերը: Միջազգային գրասենեակը կը ստանձնէ համաժողովին միացեալ ծախքերը ու այս ծախքերը գոցելու համար իւրաքանչիւր կազմակերպութեան պիտի պահանջուի մէկ անգլ. ոսկի:

5. — Հաւաքավայր. — Շատ հաւանական է որ նիստերը տեղի ունենան ընկերային գիտութիւններու վարժարանին և Սորպոնի ամփիթատորնին մէջ:

6. — Յայտագիր. — Համաժողովը պիտի բացուի կիրակի 23 Յուլիս 1922, Ֆրանսական յանձնախումբին կողմէ, որուն պիտի մասնակցի նաև Ֆրանսական կառավարութիւնը: Նիստերը տեղի պիտի ունենան երկուշաբթի, երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի, Ուրբաթ և շաբաթ:

7. — Պետք. — Չորեքշաբթի ազատ օր պիտի ըլլայ. Ֆրանսական յանձնախումբը այդ օրուան համար պիտի կազմակերպէ պտոյտներ վէրսայլ, Ռէյնոս եւլին. պատմական և հետաքրքրական վայրերը այն պատուիրակներուն համար որ կը փոփոքին այցելել այդ տեղեր:

8. — Համաժողովին պալատներ. — Սոյն համաժողովին մէջ տեղի պիտի ունենան գաղափարներու և փորձառութիւններու փոխանակում մը, համաժողովը պիտի կարգադրէ միջազգային գրասենեակին վարչութիւնը, պիտի որոշէ յառաջիկայ ձեւայօրիին վայրը, լծուականը, կազմակերպութիւնը, և 1924ի սկաուտական Միջազգային համաժողովին վայրը:

9. — Գործածուելիք լեզուներ. — Նիստերու իրր պաշտօնական լեզու ընդունուած է Ֆրանսերէնն ու անգլիերէնը. այնու ամենայնիւ պիտի նշանակուին թարգմաններ որ օտար տարրեր լեզուներով սրտասանուած ճառեր և այլն պիտի թարգմանեն:

ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՅՈՒՅԱՀՈՒՄԻՍ

Սկաուտական միջազգային համաժողովին հետ միասին տեղի պիտի ունենայ, սկաուտական տարկաններու և հրատարակութիւններու ցուցահանդէս մը: Մր. J. Loiseau պիտի վարէ այս ցուցահանդէսը որ լուրջ արժէք մը պիտի ներկայացնէ:

Իւրաքանչիւր կազմակերպութեան կը խնդրենք որ մեզ զրկէ իր ազգային սկաուտական դրօշին հետ նաև հետեւեալ առարկաներէն որինակներ:

Նշան, պատուանձան, զիբ, հանդես, բրօքս-
կանի գրութիւններ, ինքնուրեան տոն, ազգագիր,
բանակի լուսասեք, լուսանկար, ձեռնալին աւ-
ուսանման, բանակումի առարկաներ եւ սկա-
ուսական ուրիշ ու ե գոյքեր:

Բւրաքանչիւր առարկայ պէտք է խնամով
ձրարուած ըլլայ եւ ունենայ գրուած՝ զրկող
կազմակերպութեան անունը, հասցէն եւ եր-
կիրը, նշանները, լուսանկարները, սկաուտա-
կան առարկաները պէտք է Ֆրանսերէն կամ
անգլիերէն լեզուով բացատրութիւն մը ու-
նենան:

Մրարները պէտք է ապահովագրել:

Վրան գրել Conférence Internationale,
Exposition Scoute. բոլոր առարկաները զրկել
ուզգակի հետեւեալ հասցէին:

Mr. J. Loiseau, Eclaireurs de France,
10, Rue Laffitte Paris (9 me)

Ամէն ձրար պէտք է Բարիզ հասնի Յուլիս
1 էն առաջ:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆՂԷՍ ՊՐԻՒՔՍԷԼԻ ՄԼՁ

28 Մայիսի 5 Յունիս

Սկաուտներու միջեւ եղբայրական կապերը
ամբողջելու, ե Պելճ սկաուտիզմը հանրու-
թեան ծանօթացնելու նպատակով, Պէլճիզայի
սկաուտները 1922 Մայիսին, Պրիւքսէլի մէջ
սկաուտական ցուցահանդէս մը կազմակերպած
են:

Այս ցուցահանդէսը երեք բաժանունք պի-
տի ունենայ:

1.— Վաւերաթուղթեր (լուսանկար, նկար,
հրատարակութիւն)

2.— Սկաուտներու ձեռական աշխատու-
թիւններ:

3.— Տրպար-բանակեալ:

Այս առիթը հրաւեր ուղղուած է օտար
ընկերութեանց, մասնակցելու այս ցուցահան-
դէսին, որոնց զրկելիք պատուիրակութիւնները
պիտի հիւրընկալուին տրպար-բանակեալի մէջ:

Ամէն խումբ, կամ խմբակ կրնայ առաջին
երկու բաժանմունքներու համար իր մասնաւոր
անզր ունենալ եթէ կանխաւ խմայնէ:

ՏԻՊԱՐ ԲԱՆԱԿԵՏԸ

Պէլճիզայի սկաուտական բոլոր խումբերը
սիրով կը հրաւիրուին բանակումի յունիս 3,
4, ե 5 ին ախար բանակեալի մէջ: Սկաուտ
խմբապետներուն այս առիթը անմիջապէս պի-
տի զրկուի յայտագիրը եւ հրահանգներ:

Խումբեր պիտի հասնին յունիս 3 ին, որ
պատրաստ պիտի դանեն վրաններն ու անկո-
զիւնները: Խոհանոցի եւ պարենաւորման գործը
պիտի կատարուի կամաւորներու կողմէ, որով
խումբերը պիտի կրնան ճամբորդել առանց
կազմածի:

ԿԱՄԱՌՈՐՆԵՐ

Բանակեալը պատրաստելու եւ յարգարելու
համար ստիպողաբար կոչ կուզուի բոլոր
սկաուտ եւ նախկին սկաուտներուն, որ Մայիս
20 էն սկսեալ պէտք է ձեռնարկեն բանակումի:
Պրիւքսէլէն մեկնում 21, 28, մայիս կիրակի-
ներ եւ 25 մայիս, 1 յունիս հինգշաբթիներ հա-
ւաստրապէս պիտի յատկացուին այս աշխա-
տանքին:

Ընդհ. ներկայացուցիչ Նախագահ
Հանրի Տէրսոմ Բիեր Կրօ

Հասցէ: Boy-Scouts de Belgique Palais
d'Egmont, Bruxelles

Մ.Խ. Սոյն հրաւերագիրը մասնաւոր նամակով
մը Հ Մ. Ը. Մ. ի կեդրոնին եւս ուղղուած ըլլա-
լով՝ կեդրոնը պէտք կը կամ գոյքերը զրկեց
Պրիւքսէլի ցուցահանդէսին մէջ հայկական բա-
ժին մը ունենալու համար: Իսկ Բարիզի հա-
մաժողովին համար ալ ձեռնարկ կը կամ է ե
պատասխանի կ'սպասուի:

ԳՆԱՀԱՏՈՒՄ ՄԸ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1922 Ապրիլ 2ին Թափսիսի պարեկին մէջ
անգլիական բանակի կոյր զինուորներու ի նպաստ
սեղի ունեցած դաւաճանագրեալին, Հայ սկաուտ-
ներու մասնակցութեան առիթ հետեւեալ նա-
մակը ստացած է Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնը:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՒ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Պարուններ

Մեծ պատերազմին կուրցած Սնգլիացի հե-
րոսներուն, սեղույս բրիտանական ուժերու օստ-
նապէսներուն, ինչպէս նաեւ մեր կուս անհասա-
պէս կը փութանք շնորհակալութիւն յայտնել
ձեզ, այն պատրաստակամութեան համար, որ ցոյց
սուին ձեր սկաուտները, մասնակցելով անգլիացի
կոյր զինուորներու ի նպաստ տրուած դաւաճ-
անագրեալին:

Կը փափաքեմք յայտնել ձեզ թէ իրենց բերած
անմիջական օգնութիւնը. ապացոյց մը եղաւ որ
Հայ Սկաուտները, սկաուտական ամենաբարձր
արժանիքներ ձեռք բերած են: Անոնք «Պատրաստ»
էին ամեն վայրկեան:

Հանդեսին մեջ անոնց աշխոյժութիւնը եւ քննախնուր տղանցիք յիմանալի էին, մասնաւորաբար կ'ուզեմք ի՞նչեւ խմբապետներուն ծառայութիւնները, մանաւանդ իրիկուան սկաուտական հետախնդարութեամբ պաշտեր:

Ներկաները զոն մնացած էին իրենցմէ:
18 Ապրիլ 1922
Երասխասպարտ Զերդ
Ռ. ՊԱՐՐԻ ՏՕՅԷ (Նախագահ)
ՄԱՔՍՍՈՒԷԼԷ (Փոխ նախագահ)
ԱԼԵՔՏՏ ՏԷ ՊԷՐՐԻ (Յ. Ք. Ակա-
ուտներու Թուրքիոյ ներ-
կայացուցիչ)

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Պուրէժ, 23 ապրիլ 1922

Չափազանց անուշիկ սրբ, եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցաւ Պարբէշի հայ սկաուտներու հանդիսաւոր ստղանցքը, իսկ երկրորդ սրբ սկաուտները և Հ. Մ. Լ. Մ. ի սղամները միացած արշաւ մը կատարեցին դեպի վանդեղիմուն ուր ունեցան սկաուտական շուէտական և ֆութպոլի մարզանքներ:

Սկաուտները իրենց շնորհակալութիւնները կը յայտնեն պ. Ստեփան Գրիգորեանի, որ նուիրած է խումբին դրօշակը:

Ապրիլ 23 ին կէսօրէ վերջ Արարատ ընթերցարանի սրահը տեղի ունեցաւ Պարբէշի հայ սկաուտական առաջին թէյասեղանը ի պատիւ Հ. Մ. Լ. Մ. Պոլսոյ կեդրոնի անղամներէն Պ. Թադէոս Մեծատուրեանի:

Նոյն օրուան դաշտային Յրգ. արշաւանքէ վերադարձած բոլոր սկաուտները թիւով 30 հոգի և Հ. Մ. Լ. Մ. ի Պոլսոյ անղամները վարչութիւնը իր կազմով ներկայ էին: Թէյասեղանը շատ ուրախ անցաւ սկաուտական զուարճալի պատմութիւններ և խօսակցութիւնները հրապուրտութիւն թէյասեղանին: Մասնաւոր կերպով անակնկալ մը եղաւ խմբակի անասուններու ձայներով սկաուտներու արտայայտութիւնը:
Թղթակից

Նիւ-Եօրկ 6 Ապրիլ 1922

Սիրելի՛ Կարօ,

Այս անգամ Նոր Աշխարհէն է որ կը գրեմ քեզի: Ղրկած նամակդ ստացայ, շնորհակալ եմ. սակայն լսկոնական ոճով շարադրուած ու պաշտման հանգամանք մը ունէր, այնպէս որ՝ բարեկամէ մը ստացուած նամակի մը տպաւորութիւնը ձգելու տեղ՝ Պապր Ալիէն ստացած իրապարտմէի մը ազդեցութիւնը գործեց վրաս ! !

Ինչպէս գիտես, Հ. Մ. Լ. Մ. ի New-Yorkի մասնաճիւղը նորակազմ բլալուն պատճառաւ և այս առթիւ բուսական թիւով անղամներ ունեցած չբլալուն նամար դրամական տեսակետով անցուկ վիճակի մէջ կը գտնուի, ուստի՝ հասոյթի աղբիւրներ տեղծելու և միութեան նպատակին իրագործման սատարելու նամար ջանք չի խնայիր, այս նպատակաւ Մարտ ամսոյ 18ի իրիկունը New-Yorkի Bryant Hallի մէջ մարզանդէս մը սարքեց, ներկայ եղող բազմութիւնը թէև բնորոշաւ, բայց այնքան ալ հոծ չէր, այնպէս որ շատ մը աթոռներ իրենց վրայ հանգչողներէ զուրկ էին, այս պատճառաւ հանդէսին կազմակերպութեան նամար ծախսուած դրամը հազիւ կարելի եղաւ ապահովել:



Տիգրան Խոյեան և Պօղոս Պետրեմեան

Հ. Մ. Լ. Մ. Նիւ-Եօրկի ԹԻՄԷՆ
Մարզահանդէսին՝ ներկաներուն մէջ կը գտնուէին նաև Բարգէն եպիսկոպոս եւ Պ. Գարեգին Բատարմանեան եւ ուրիշներ: Բարգէն սրբազան կուռ ու ազգու ոճով մը ժողովուրդին բացատրեց մարմնակրթութեան կարեւորութիւնը և ըսաւ թէ՝
« Աստի մը մարմնակրթանքը չիղերէ զարգացնելու կը ծառայէր, իսկ այժմ բարգաւաճութիւնը աշխարհին միակ և նպատակը կը կազմէ, վասնզի ան նկատուած է ազգային վերականգնումը դիւրացնող ազդակներէն մին: Մինչև որ ազգին մկանունքը լաւ մը չի կազմուի, կարելի չըլլար վտանգներուն դիմագրաւել, մեր պատմութիւնը ցոյց կուտայ թէ՛ հայ ազգը իր ֆիզիքական զարգացման միշտ հոգ տարած է, ունեցած ենք աւագոյն սուր գործածողներ, լորախաղացներ նիզակ նետողներ եւ այլն եւ այլն:
« Մինչև որ ամէնքս չի սորվինք առողջ ապրիլ ու խօսիլ, չենք կրնար ներքին ու արտաքին աշխարհի մէջ իրաւունքնիս պաշտպանել: Մարմնակրթանքը ազգային գոյութեան խնդիր մ'է:
« Նորագոյն ազգ. զաղափարի մը փթթումը թող տեսնեն Նիւ-Եօրքի հայերը յանձին այս ափ մը պատանիներու, որոնք մարմնակրթանքի հանդէպ ունեցած իրենց հոգածութեամբը, կը խոտանան ասպազայ զօրաւոր պաշտպանները հանդիսանալ թշուառ հայութեան: Անոնք որ կուզեն Ազգը պաշտպանել, թող իրենց ձեռքերը երկարեն, երիտասարդներ՝ որոնք իրենք զիրենք կարող կ'զգան, թող զան միանան այս

« մարզիկներուն, եւ ինքզինքնին բարձրացնեն, որ-
« պէտքի կարող ըլլան ուրիշներն ալ բարձրացնելու,
« եւ այն ատեն կունենանք առողջ ու կորովի
« Հայութիւնք: Յետոյ տեղի ունեցան գործիրով՝ չա-
փական մարզանքներ եւայլ. եւայլն:

Անշուշտ ասիէ առաջ մեզի տեղեկացուցուած
պէտքէ ըլլայ թէ՛ մասնաճիւղս Դեկտեմբեր ամսոյ մէջ
Metropolitan Social League-ին արժանագրուած է, յորմէ
հետէ բազմաթիւ մրցումներու մասնակցած ոմանց
յաղթած, շատերէ ալ պարտուած է՝ պակաս անդամ-
ներով խաղացած ըլլալուն համար:

Կայ նաեւ բաժակի մրցում մը, որուն կը մասնակ-
ցին լիկի բոլոր թիմերը: Լիկը իր թիմերը 4 մասերու
բաժնած է որ կը բաղկանայ 16 թիմերէ, իւրաքանչիւր
մրցումին 4 թիմ կը մասնակցի, եւ յաղթող կողմը
բաժակի իրաւունքէն կը զրկուի, ի վերջոյ 2 խումը
զէմ զինաց պիտի խաղան եւ յաղթող կողմը բաժակը
պիտի առնէ:



Նիւ-Եօքի 2. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղի եւ
Metropolitan League ի բաժակի Բ. բղ. մըր-
ցումը հաջերը յաղթական 4 ի դէմ 5 ով:

Մեր խումբը, մինչեւ հիմայ բաժակի 2 մրցում
խաղայ, մէկը մարտ 12ին Catalonia Սպանիական
Կուսակցին դէմ, որուն՝ Օրի դէմ 9 կողով յաղթեց, իսկ
միւսը Մարտ 26ին Flushing F. C. ի դէմ, որուն զարձ-
եալ 1ի դէմ 5 կողով յաղթեց մեր խումբը:

Բաժակի մրցումներուն մասնակցող 16 թիմերէն 7ը
զուրս ձգուած են ցարդ՝ խաղը կորսնցուցած ըլլալուն
համար եւ մեր խումբը մնացեալ 9ին մէջ կը գտնուի:
Նուիրուելիք բաժակը պղինձ է եւ Royal Nestor Cup
անունը կը կրէ: Յաղթական խումբին, բաժակէն զատ,
սակի Medailleներ ալ պիտի տրուին, 2րդ ելլող խում-
բին միայն արծաթ մետալներ պիտի տրուին: Մերին-
ները այս առթիւ չափազանց խանդավառուած են:

Երկու շաբաթ առաջ, իկի ամենէն զարաւոր թիմին
հետ մրցում մը ունեցան մերինները, եւ 1ի դէմ 3 կո-
լով պարտուեցան: Ասիկայ աշխիշներու թիմն է Try-
connell Celtic անուն, որ ցարդ ո՛չ մէկ թիմէ պար-
տուած է, պէտք է ըսեմ որ շատ վայրենիօրէն խա-
ղացին, եւ մեր կողմէ եղած 1 կօլին չկրցան հանդուր-
ժել ու չափազանց ջղայնացան: Խեղճ՝ Մամաս, բիչ
մնաց կողերը պիտի կտրտուէր:

Փողովուրդը տակաւին անտարբեր է, ու այս կամ
այն կուսակցական խնդիրներով աւելի՛ կը հետաքրք-
րուի, քան Հ. Մ. Ը. Մ. ով, եւ ասիայն սա վերջին
օրերս կարեւոր փոփոխութիւն մը կը նշմարուի, եւ
մասնաճիւղս ամէն ջանք ի գործ պիտի դնէ՝ փաղձակի
փիճակի մը հասնելու համար մասնաճիւղը:

Մասնաւոր ու սխալիք բարեկեան ամենակն

Ս. Յ. ՇՄԱՌՆԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ՊԱՍԲԵԹՊՈՒԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Կ Ա Ն Ո Ն 12

ԲՈՆՈՒԱԾ ԳՆԴԱԿ (Held ball)

ԲՈՆՈՒԱԾ ԳՆԴԱԿԸ ՎԵՐ ԿԸ ՆԵՏՈՒԻ

Յօդ. 1.— Երբ բռնուած զնդակ յայտա-
բարութի, Իրաւաւարը գնդակը խաղի մէջ պէտք
է գնէ այնպէս ինչպէս կեղբոնին մէջ: Այն
երկու խաղացողները որոնք գնդակը բռնուած
են, խաղը վերականգնու ատեն կեղբոնիններուն
նման դիրք մը պիտի առնեն, երեւակայական
չըջանի մը մէջ, հոն ուր գնդակը բռնուած է
բացի Յօդ. 2 ին մէջ նշանակուած պարագայէն:

ԵՐԲ ԳՆԴԱԿԸ ԿԸ ԲՈՆՈՒԻ ՅՈՒՅՏԱՍԽՏԱԿԻՆ ԵՏԻՆ
ԱԶԱՏ ՆԵՏԵԼՈՒ ՆՐԲԱՆՅՔԻՆ ՄԵՋ ԿԱՄ ԿՈՂՈՎԻՆ ՏԱԿ

Յօդ. 2.— Երբ բռնուած զնդակ յայտարարուի
ցուցատախտակին ետին ազատ նետելու նըր-
բանցքին մէջ, կամ կողովին տակ, գնդակը
խաղի մէջ պէտք է գնել ազատ նետելու գծին
վրայ այնպէս ինչպէս կեղբոնին մէջ:

Յրանօք. «կողովին տակ» ըսելով կը հասկնանք
այն կէտը ուր կողովը կամ ցուցատախտակը պիտի
զգտնին գնդակին մէկ կամ միւս ցատկոյին, երբ
գնդակը այդ կէտին մէջ վեր նետուէր:

Կ Ա Ն Ո Ն 13

Ա Զ Ա Տ Ն Ե Տ Ո Ւ Ա Ծ Ք

ՖԱՌԻԼԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵՆԷՆ ՎԵՐՋ

ԿԱՏԱՐՈՒԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Յօդ. 1.— Երբ ֆաուլ մը յայտարարուի,
Իրաւաւարը ամիջապէս գնդակին պէտք է տի-
րանայ և առանց յապաղման զայն գնէ նետե-
լու իրաւատուութիւն ունեցող խումբին ազատ
նետելու գծին վրայ: Կօլի համար նետելու
փորձը պէտք է կատարուի գնդակը գծին վրայ
դրուելէն առաւելագոյն տասը երկվայրկեանի
մէջ:

ԿՕԼ ԸԼԼԱԼՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԳՆԴԱԿԸ ԿԵԴՐՈՆ

Յօդ. 2.— Եթէ կօլ ըլլայ գնդակը խաղի
մէջ պէտք է գնել կեղբոնէն:

ԳՆԴԱԿԸ ԻՐ ԽԱՂԸ ԿԸ ԵԱՐՈՒՆԱԿԷ ԿՕԼԸ

ՎՐԻՊԱԾ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Յօդ. 3.— Եթէ կօլը վրիպի գնդակը իր
խաղը կը շարունակէ բացի,

Ա.— Երբ կրկնակ Ֆաուլ մը պատահի, այն ատեն առաջին նետուածքէն վերջ գնդակը ամուլ է և երկրորդ նետուածքէն վերջ կեդրոնէն խաղի մէջ պէտք է դրուի:

Բ.— Երբ երկու կամ աւելի ազատ նետուածքներու իրաւունք ունի խումբ մը, որ ատեն գնդակը ամուլ է իւրաքանչիւր ազատ նետուածքէ վերջ բացի վերջինէն: Եթէ կօլը վրիպի վերջին նետուածքէն վերջ, գնդակը իր խաղը կը շարունակէ:

ԿԱՆՈՆ 14

ՕՐԷՆՔԻ ԲՈՒՆԱՐԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ (violations and penalties)

ԽԱՆԱՅՈՂ ՄԸ ՊԷՏՔ ԶԷ

Յօդ. 1.— Կօլ ընել փորձէ երբ գնդակը ամուլ է:

Յօդ. 2.— Կօլի համար ազատ նետուածք մը փորձած ատեն, գնդակը ցուցատախտակին կամ կողովին դպելէ առաջ ազատ նետուած գիծին դպցնել կամ զայն անցնել, և կամ ազատ նետուածք մը կատարելու համար ասոր երկվայրկեանէն աւելի ժամանակ սպասել:

Ծանօթ. Այդ պարագային կօլ ըլլայ կամ ոչ գնդակը կեդրոն պէտք է:

ՀԱՏՈՒՑՈՒՄ (penalty) (Յօդ. 1 և 2)

ԵՔԷ ԿՕԼ ԸԼԼԱՑ ՊԷՏՔ ՎԷ ՀԱՇՈՒՅԼ

Յօդ. 3.— Գնդակը սահմաններէն դուրս հանել:

Յօդ. 4.— Գնդակը սահմանին դուրսէն խաղադաշտ բերել:

Յօդ. 5.— Գնդակը սահմանին դուրսէն խաղի մէջ գնելէ վերջ, ուրիշ խաղացողէ մը առաջ անոր դպիլ:

Յօդ. 6.— Սահմանին դուրսը հինգ երկվայրկեանէ աւելի բռնած կենսալ զայն խաղի մէջ գնելէ առաջ:

ՀԱՏՈՒՑՈՒՄ (Յօդ. 3, 4, 5, 6,)

ԳՆԴԱԿԸ ՍԱՇՄԱՆԷՆ ԴՈՒՐՍ ՀԱԿԱՌԱԿՈՐԳԻ

ՄԸ ԿԸ ՓՈԽԱՆՑՈՒԻ

Յօդ. 7.— Նոյնպէս չկրնար ազատ նետուելու նրբանցքը մանել կամ անոր գծերուն դպչիլ, ազատ նետուածք մը փորձուած պարագային, մինչեւ որ գնդակը կողովին կամ ցուցատախտակին դպչի, կամ ո եւ է կերպով վախցնել այն խաղացողը որ ազատ նետուածքը կը կատարէ: Եթէ ազատ նետուածքի նրբանցքի երկայնքը խաղացողները դիւրքի համար վիճա-

րանին, Իրաւաւար պէտք է կարգի դնէ խաղացողները այնպէս մը որ փափարուած դիւրքը հաւասարապէս բաժնուին:

ՀԱՏՈՒՑՈՒՄ (penalty) (Յօդ. 7.)

Եթէ օրէնքին բռնաբարումը կատարուի կօլ ընել փորձող խումբին խաղացողներէն մէկուն կողմէ, կօլ եղած պարագային չհաշուուի խաղ վրիպած պարագային զայն կեդրոնէն խաղի մէջ պէտք է դնել: Հակառակորդ խումբի մը խաղացողին կողմէ բռնաբարուելու պարագային, կօլ եթէ ըլլայ կը հաշուուի խաղ երբ վրիպի երկրորդ ազատ նետուածք մը կը բոլլասուի: Ազատ նետուածք անձնական Ֆաուլ մը կը յայտարարուի:

ԿԱՆՈՆ 15

ՖԱՈՒԼՆԵՐ ԵՒ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

Ա. Մասնագիտական Ֆաուլներ

ԽԱՆԱՅՈՂ ՄԸ ՊԷՏՔ ԶԷ

Յօդ. 1.— Գնդակին հետ վազէ, ոտքով հարուածէ կամ կռուփով գործէ:

Յօդ. 2.— Խաղը յապաղեցնէ:

Ա.— Գնդակը սահմանէն դուրս գտնուող հակառակորդի մը ձեռքը եղած ատեն:

Բ.— Խաղադաշտէն հետ անալով:

Գ.— Իրաւաւարը գնդակը երկու խաղացողներու միջեւ վեր նետած պահուն, վեր ցակելու կանոնները բռնաբարելով:

Դ.— Մասնաւորաբար հոս չխշատակուած մարզական ոգիի հակառակ հնարք մը գործելով:

Յօդ. 3.— Արգելք ըլլալ խաղացողի մը որ գնդակը սահմանին դուրսէն խաղադաշտ կը նետէ, այսինքն իր մարմինն ոչ մէկ մասը պէտք չէ խաղադաշտէն դուրս ելլէ և կամ գնդակին դպի անոր գիծէն ներս անցնելէն առաջ:

Յօդ. 4.— Կօլի համար ազատ փորձ մը կատարած միջոցին գնդակը ուրիշ խաղացողի մը փոխանցել: Միայն կրնայ զայն կողովէն անցնելու համար իրաւացի ջանք մը ընել:

Յօդ. 5.— Գնդակը կողովին մէջ կամ անոր եզերքին վրայ եղած միջոցին խափանել:

Յօդ. 6.— Յաջորդական հարուած մը (dribble) կատարուելէ վերջ, երկրորդ (dribble) մը ընել, մինչեւ որ երկու dribbleներուն միջեւ ուրիշ խաղացող մը դպի գնդակին:

Ծանօթ.— Գնդակը մէկ ձեռքէն միւսին փոխանցելը dribble չէ, մինչեւ որ գնդակը որոշապէս չէ հարուածուած: Գնդակը օղին մէջ կարելի է dribble ի մը ընթացքին հարուածել միայն մէկ անգամ:

Յօդ. 7.— Խաղաղաշար երթալ իրր փոխա-
նորդ մը Արձանագրողներուն անդեկացնելէ և
Իրաւարարէն ճանչցուելէ առաջ :

Յօդ. 8, Պաշտօնատարներուն հետ խօսիլ
կամ սև է ձեռով մարդիկի անվայել ընթացքի
մէջ զանուիլ :

ՀԱՏՈՒՑՈՒՄ Յօդ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 ին ,

Կօլի համար ազատ նետումք մը

Յօդ. 9.— Խաղի ընթացքին , խաղաղաշարէն
զուրս խուճերէն մէկուն հետ պաշտօնապէս
կապ ունեցող սև է մէկու մը կողմէ խաղի
մասին թեւադրութիւն կամ զեկամարութիւն
տեղի պէտք չէ ունենայ :

Յօդ. 10.— Իրաւարարին կամ Դատարին
հրամանէն զուրս , խաղի ընթացքին ոչ սք
կրնայ խաղաղաշար մանել :

ՀԱՏՈՒՑՈՒՄ Յօդ. 9, 10 ին ,

Կօլի համար ազատ նետելու փորձ: Մեղան-
չող խուճերին խմբապետին դեմ մասնագիտական
Ֆաուլ մը կ'արձանագրուի:

F. ԱՆՁՆԱԿԱՆ ՖԱՈՒԼ

ԽԱՂԱՑՈՂ ՄԵ ԶԿՐԱՐ

Յօդ. 11.— Բռնել , խափանել , սոք զնել ,
յարձակիլ կամ հրել հակառակորդ մը , զնդակը
հաւասարապէս մէկ կամ միւս խաղացողին
ձեռքը բլլալու պարագային :

Յօդ. 12.— Անհարկի կերպով կոպտութիւն
ընել :

Յօդ. 13.— Յարձակիլ և մարմնական հպում
մը ունենալ հակառակորդի մը հետ որ , իրենց
մէկ կամ երկու ձեռքը զնդակին վրայ եղող
երկու հակառակորդ խաղացողներէն մէկն է :

Ծանօթ.— Պաշտօնատարները այս յօդուածին
մէջ նշանակուած ֆաուլին առաջը կրնան առնել
ուղղակի «բռնուած զնդակ» յայտարարելով :

ՀԱՏՈՒՑՈՒՄ Յօդ. 11, 12, 13 ին

Կօլ ընելու ազատ փորձ մը: Օրինագանցիկ
պէտք է նշանակել նաեւ անձնական Ֆաուլ մը:
Այն խաղացողը որ չորս անձնական Ֆաուլ կը
կատարէ պէտք է ինքնաբերաբար խաղէն հեռա-
նայ: Խաղէն արժանանելու այս որոշումը ոչ
մէկ պարագայի մէջ կարելի է զանց առնել,
ընդհակառակը բացարձակ կերպով պէտք է զօրա-
ցնել: Իրաւարարը բոլորակաւ է Յօդ. 11 ի և
12 ի միակ օրինագանցութեան մը փոխարէն խա-
ղացող մը արժանանել:

Յօդ. 14. Յարձակիլ , հրել , բռնել կամ սքիլ

սև է ֆաուլ մը կատարել այն խաղացողին որ
զնդակը կողովին մէջ նետելու գործողութեան
մէջ է :

ՀԱՏՈՒՑՈՒՄ Յօդ. 14 ին ,

Ազատ նետելու երկու փորձ: Օրինագանցը
պէտք է երբարկուի մէկ անձնական Ֆաուլի կամ
պարագային համեմատ մէկ անգամէն խաղէն
դուրս հանուելու:

Ծանօթ.— Հակառակ կատարուած ֆաուլին, կօլը
եթէ տեղի ունենայ կը հաշուուի: Ասկէ զատ ազատ
նետելու երկու փորձերն ալ թոյլատրուած են:

Յօդ. 15.— Մոլեղին և տգեղ կոպտութիւն
մը գործել խաղացողի մը որ զնդակը կողո-
վին մէջ նետելու գործողութեան մէջ է :

ՀԱՏՈՒՑՈՒՄ Յօդ. 15 ին ,

Ազատ նետելու երկու փորձ: Օրինագանցը
պէտք է խաղէն դուրս հանել:

Հարսից

Գ. ՃՕԼՕԼԵԱՆ

Վ. Ա Ր Ջ

ՊՕՔՍԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պօքսի մրցումներու մասին գրուած յօդ-
ւածներու մէջ՝ շատեր կարգացած են բառեր և
բացատրութիւններ , որոնք՝ իրենց անհասկնալի
եղած են: Մեր բարեկամներուն միտքը
չատ չի յօգնեցնելու համար քանի մը տեղե-
կութիւններ պիտի տանք անոնց մասին :

Մ Ա Ն Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Պօքսը բաժնուած է 8 ծանրութիւններու
որոնք ունին իրենց առանձին շամբիոնները ,
ամէն ծանրութիւն ունի որոշ սահման մը և
այդ սահմանին մէջ եղողները կրնան իրարու
հետ մրցիլ: սակայն երբեմն կ'ըլլան ազատ
ծանրութեան մրցումներ որոնք երկու մրցող-
ներուն հաւանութեամբ տեղի կ'ունենան և
ծանրութիւնը նկատի չ'առնուիր: Յաջորդ թիւով
մը աշխարհի ժամբիոններու և ծանրութիւն-
ներու մասին տեղեկութիւններ պէտի տանք :

Մ Ր Յ Ո Ւ Մ

Մրցում մը բաղկացած է ռաուցներէ
ամէն ռաուց 2 և կամ 3 վայրկեանէ բաղկա-
ցած կ'ըլլայ , ինչ որ մրցողներուն հաւանու-
թեամբ կ'որոշուի , և ամէն մէկ ռաուց է վերջ
կ'ըլլայ 1 վայրկեաննոց դադար մը : Մեծ մր-
ցումները ընդհանրապէս 3 վայրկեաննոց 20
կամ 15 ռաուց կ'ըլլան , որոնք նոյնպէս մր-
ցողներուն համաձայնութեամբ կ'որոշուին :

Զ. Ե Ռ Ն Ո Ց

Չեռնոցները զանազան ծանրութեամբ կ'ըլլան, կան 4, 6, 8, 10, և այլն առևանոց (անգլիական ծանրութիւն մըն է) ձեռնոցներ: Մրցումի ատեն ընդհանրապէս 4 առևանոցը կը գործածեն սակայն երբեմն խաղացողներուն կամքով կրնայ 6 կամ 8 առևանոցով ալ խաղացուիլ, իսկ միւսները և նոյնիսկ 8 առևանոց փորձի համար կը գործածուի, ինչպէս յայտնի կ'երեւի, թեթեւ ձեռնոցը բարակ բլլալուն հարուածները ազգու կ'ըլլան, իսկ ծանրին մէջը լեցուն բլլալուն հարուածները իրենց ուժգնութիւնը կը կորսնցնեն:

ՆՕՔ ՏԱՌԻՆ ԵՒ ՆՕՔ ԱՌԻՏ

Ռաուլիսի միջոցին եթէ երկու հակաակորդներէն մէկը գետին իյնայ և մինչեւ 10 երկվայրկեանէն, որ դատաւորը կը համրէ, վեր ելլէ ճօժ սառն եղած կ'ըլլայ, իրաւ որ բաւական կէտ մը կը կորսնցնէ, սակայն կրնայ խաղը շարունակել, իսկ եթէ մինչեւ 10 ը վեր չելլէ այն ատեն ճօժ առտ եղած կ'ըլլայ և խաղը կը կորսնցնէ եթէ նոյն իսկ 11 երկվայրկեանէն ելած բլլայ ան:

Թ Ա Յ Մ (Դ Ա Դ Ա Ր)

Ինչպէս վերը ըսած էի ամէն ռաուլիսէ վերջ կ'ըլլայ 1 վայրկեաննոց դադար մը, որ մեծապէս կրնայ օգնել մրցորդներուն զանազան պարագաներու մէջ, եթէ մրցորդներէն մէկը գետին իյնայ և տակաւին դատաւորը տառը երկվայրկեանները հա'րելը չ'աւարտած (7 ին կամ 9 ին) ռաուլիսը վերջանայ և դադարը գայ, ու ինկած մրցորդը ճօժ առտ ալ եղած բլլայ այսինքն 14 — 15 կամ աւելի գետինը մնայ անոր օգնականները այսինքն երկրորդները կրնան զայն զանազան միջոցներով 1 վայրկեադադարի միջոցին ինքզինքին բերել և մրցումը շարունակել տալ, եղած են մրցումներ որ այսպէս մէկը լաւ մը ճօժ առտ բլլալէ վերջ բայլին շնորհիւ ազատած և յետոյ մրցումը շարունակելով, իր հակաակորդը ճօժ առտ բրած է:

Ե Կ Ր Ո Ր Գ Ն Ե Ր

Մրցորդ մը կ'ունենայ երեք կամ 4 եկրորդներ որոնցմէ մէկը, զիսաւոր եկրորդը կը կոչուի որ ընդհանրապէս մարզիկներուն մարզիչը կ'ըլլայ, անոնք իրաւունք կ'ունենան, իրենց ուզած

ատեն մրցումը զաղբեցնել՝ սպունքը կամ փչոցը մէջտեղ նետելով եթէ իրենց մարզիկը գէշ վիճակի մէջ տեսնեն:

Սպունքի մատին տեղեկութիւն տալու համար ըսեմ որ, ամէն մրցող կ'ունենայ իր անկիւնը ուր կը գտնուի մրցողը զովայցնելու համար աման մը ջուր որուն մէջ կը գտնուի սպունք մը և որով կը զովայցնեն մրցորդը. իսկ փչոցները որ պարզ անձերոցներ են, կը գործածուին դադարի ժամանակ խաղացողին հով տալու:

Ահա այսքան բացատրութիւն մը բաւական պիտի ըլլայ կարծեմ, գրուածները կարդացած ատեն շիւրջութեամբ հասկնալու համար:

Գ. ՔԷՇԻՇԵԱՆ

ԿԵԴՐՈՆԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԷՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Հ. Մ. Ը. Մ. Ը ԵՒ ՓՐՅԷՍԻՕՆԷԼՈՒԹԻՒՆԸ

Հ. Մ. Ը. Մ. Ը ի կեզր. վարչութիւնը անգամ մը եւս պարտք կը զգայ յայտարարել իր Պոլսոյ և արտասահմանի բոլոր մասնաճիւղերուն թէ՛ Հ. Մ. Ը. Մ. Ը սիօրի և արլերիի խնդիրներուն մէջ անդրդուելի կերպով կապուած բլլալով ամաթեօնութեան սկզբունքներուն, որոշած է ամէն կերպով և օրինական ամէն միջոցներով արգիլել բրօքեպիօսիէլութեան մուտքը և զարգացումը իր շարքերուն մէջ:

Այս տեսակէտը կը համապատասխանէ իր կանոնադրին, ինչպէս նաեւ այն սկզբունքներուն՝ որոնցմով ան կ'առաջնորդուի, հետապնդելով մեր երիտասարդ սերունդին ֆիզիքական զարգացման կողքին, անոր նկարագրի ազնուացումը:

Ան չպիտի ներէ որ և իցէ առիթով կամ պատրուակի տակ Հ. Մ. Ը. Մ. Ը ու է խումբը կորենայ մրցիլ ուրիշ խումբի մը հետ՝ որուն մէջ բրօքեպիօսիէլ խաղացողներ կան, նաեւ Հ. Մ. Ը. Մ. Ը ու է իցէ անդամը չպիտի կրնայ մրցիլ կամ նոյնիսկ փորձեր կատարել խումբի մը դէմ, որ իր մէջ բրօքեպիօսիէլ անդամներ ունի:

Հ. Մ. Ը. Մ. Ը կեդրոնական վարչութիւն

Ի. Խ. 22 Մարտին, օրաթերթերու միջոցաւ ծանուցումով վերի յայտարարութիւնը, մօտ օրէն տեղի ունենալիք Պոլսոյ մարզական մրցումներու առթիւ յարմար կը տեսնենք կրկնել հոս:

Վարիչ-խմբագիր	Արտուստր	Պատասխանատու-Տնօրէն	Տպագրութիւն
ԿԱՐՕ Պ. ՈՒՇԱԳԼԵԱՆ	ԳԱՌԼՕ ԵԱԶԻՆԵԱՆ	ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ	Կ.ՔԷՇԻՇԵԱՆ ՈՐԳԻ



Հեղինակ՝ EMILIO SALGARI

Խոլ. Թրգմ. Հ. ՅԱՆՈՒՍ ԲՕՄԲՐՅԵՂՅԱՆ

ԺԳ. ՔԱՐԻՒՂԻ ԼԻՃԸ

Թե՛ որ երբնայտիք պոռացած ըլլար, խնայեալ
 բուն գանձերը, հաւանորէն՝ շոգեմախոյնին խորը
 մեռածի պէս պատկոյներէն ոչ ոք պիտի ցնցուէր:
 Ասկայն՝ երեք անգամ կրկնող այդ խեղճուկ ու-
 նայր ջո՛ւ... բը ջո՛ւ... բը ջո՛ւ... բը զանոնք
 վեր պատկեցուց իրբեւ երկկրական հասանքէ մը
 մը ցնցուած: Նախ Մորկան, յետոյ, Պարթըն և ապա
 Ս'Քանոք գերադա՛ն ճիգով մը գլուխնին վերցուցին,
 յետոյ ծունկի վրայ եկան կէս մարած աչքերով,
 չրթունքնին բաց, բառնցքնին սգմած, և ականջնին
 լարելով:

— Ջո՛ւ... բը ջո՛ւ... բը կրկնեց Սըր ձօն կառ-
 ճելով զեկի փայտին:

Մորկան խոստով ձայն մ'արձակեց ձաթառած
 չրթունքներէն:

— Ո՞ր, կակապեց: Ո՞ւ... բը

Երկրաչափը չափաախտանեց, զէպ յառաջ ձը-
 աւած՝ աչքերը խոշոր խոշոր բացած, շունչը բռնելով,
 դարհուրելի տազնապով մը մտիկ կ'ընէր:

Նուսն կը բուէր խուլ դղրդուն մը կարծես
 ջուրի անագին սիւն մը կը նետուէր բարձրութենէ
 մը ջախջախուելով ժայռերուն վրայ: Տարակոյտ չկար
 այնուս, կէս մղան աւելի վեր ջրովէ՛մ մը կար և թե-
 թուս այդ ջուրը անոյշ էր:

Երբորդ ունոց մը բրդաւ երկրաչափին չըր-
 թունքներէն:

— Ջո՛ւ... բը, ջո՛ւ... բը:

Մեքենավարը յուսահատ ճիգով մ'երաւ. անուշ
 անուխի խոշոր կտոր մ'առաւ՝ տատանուելով մօ-
 տեցաւ մեքենային ու զայն հնոցին մէջ նետեց:

Ջրովէ՛մն ձայնը՝ յանի շուսախտ յառաջանար,
 ա՛յնքան աւելի որոշ կը լսուէր, և այդ հսկայական

պարիսպները որ քանի մը հարիւրաւոր մղաններ
 իրենց անագին բարձրութիւնը, սեպուլթիւնը պահեր
 էին, խորունկ ճեղքեր և աւելի անոյշ հակումներ
 ցոյց կուտային: Նինգհարիւր մեղր աւելի անդին,
 ձախտողմի պարիսպը յանկարծ ցածցաւ, զետե-
 զերքը հալու մը քանի երկվեցեակ սոք բարձրու-
 թիւն ունէր:

Սըր ձօն, որ աչքերը սեւեռած կը զիտեր այդ
 ստանէ՛նքը, զեկը դարձուց յաջ, մ'նչպե՛ս Մորկան
 մեքենան կը զսպէր: Նոգեմախոյնը իր ուժովն մըր-
 ւած եզերքին բաղխեցաւ՝ անուշ զատիթափի մը
 վրայ ցուկի մը խուլով:

— Ջը... վէ՛... ժը, զոչեց երկրաչափը անրա-
 ցատրելի շեշտով, ժայռերու ս'ւ կոյտը ցոյց տալով:

Յուսահատ ճիգերով այդ չորս մարդիկ՝ իրենք
 զիրենք դուրս նետեցին շոգեմախոյնէն ու մերթ
 գինովեցուց պէս քալելով, մերթ ինչպիսի և օձի
 պէս սոցոսկելով, իրարու օգնելով, հասան գետափին
 կատարը: Երեսուն քայլ անդին, ջուրի անագին սիւն
 մը հարիւր մեղրէն աւելի ոտուումէ մը յետոյ կ'իյ-
 նար կը ջախջախուէր՝ լայն աւազանի մը մէջ, որ
 այդ անդադրում և սարսափելի բախումէն փոշիա-
 ցած, խոռոչացած և ցցուած անաւոր ժայռերով
 շրջապատուած էր:

Սըր ձօն և ընկերները վերջին ճիգով աւազա-
 նին հասան, և իրենք զիրենք անոր շեղքը նետե-
 ցին՝ խենթափար չրթունքնին, գլուխնին ու ձեռ-
 քներնին խօթելով պազ ու վճիտ ալիքներուն մէջ:
 Հէգ դժբախտները կը խմէին, կը խմէին ու կը խը-
 մէին՝ գրեթէ առանց շունչ առնելու, յաղթա-
 նակի գոռուներով ու խենդի հրճուանքով:

— Իսմե՛մ, խմե՛մ, կը պոռար Պարթըն ինքն իրեն գուրա ելած:

— Սրճան՛ձ ըլլայ սուրբ Բարդիք կը թօթօլէր իրլանտացին՝ որ ջրհանի պէս ջուրը կը խմէր:

Ամէնքն ալ կը խմէին, ու ջուրին՝ պաղ պաղ իրենց բերնէն անցնելը և իրենց շրթունքին, յեղուին ու կոկորդին պէս այրած ստամոքսին մէջ իջնելը կը զգային: Կարծես լմնալիք ջու՛նը, և իրբեւ թէ ուղէին աւազանը սպառել ու կլկել նոյն իսկ ջրոյ սրունը որ ժայռերուն վրայ թափելով ջուր կը սրբակէր անոնց գլխուն և զգեստներուն վրայ:

— Իս՛ է, ըսաւ վերջապէս Սըր ձօն, մէկիկ մէկիկ դանտը քաշելով ետիքէն: Թէ որ այսպէս շարունակէք քիչ մըն ալ, լուրջ փորձանքի կ'իջնաք:

— Ա՛հ, ի՛նչ հրաշալի ջուր է այս, գոչեց խառնածինը: Քանի՛ բարայր կ'առնէ՞մ ծիւնը, պրանքս, վիսիին այս ջուրին քօր: Ո՞վ պիտի բտեր թէ ես ջուրով պիտի հարբենայի:

Ծարաւն անցնելէն յետոյ՝ մտածեցին բան մը ուտել: Քսանր՝ ինք ժամէ ի վեր պատառ մը պիտի առնէր: Գառ բան չէին գրած իրենց ակաաներուն տակ և ուժասպառ եղեր էին: Օ՛րնոր անապարեց հին տակառի և անուխի կոտորներով կրակ մը վառել, խոշոր սանը լեցուց միսով բրինձով և ընդեղեններով ու զբաւ կրակին վրայ, միւս կողմէն Պարթըն խոզ ապուխտի լաշն շերտեր կը խոռովէր:

Երկու ժամ վերջ Սըր ձօն և երեք որսորդներ՝ ցամաքը նստելով՝ ուժգնորէն յարձակեցան կերակուրին վրայ որ ակնթարթի մէջ աներեւութացաւ անոնց ստամոքսին մէջ: Մէկ մէկ գաւաթ վիսքի պարպելէն ետք, ընկողմանեցան ժայռերուն վրայ իրենց ծխափողները վառած:

— Սըր ձօն, ըսաւ Պարթըն, որ գլուխը աջ ու ձախ կը դարձնէր, ս՛րբան խորութեան մէջ կը ծրխենք:

— Հազար երկուհարիւր ոտը, պատասխանեց Սըր ձօն:

— Ս՛ճ: *ժնո՛ճ*

— Կը վախնա՞ս:

— Ա՛հ, բայց, թէ որ այս անագին կեղեւը տեղիք տար:

— Մի՛ վախնար, մեր մտորակը չի վ՛ւնըր: Օգոյ պարզ պղպղակէ մ'եղաւ, բայց այսօր երկաթեայ գնդակէ մ'աւելի պինդ է:

— Ա՛հ, ըսիք թէ օգոյ պարզ պղպղակէ մ'եղած է...

— Պիտի աւելցնեմ թէ՛ աւելի թեթեւ մեր ջրնշած մտնորտէն:

Խառնածինը, Օ՛րնոր և նոյն իսկ Մորկան իրեն նայեցան ամենամեծ դարմացմամբ:

— Ճշմարթե՛տ է ինչ որ կ'ըսէք, հարցուց Մորկան:

— Ստոյգ է: Երբ՞որ՝ մեր մտորակը, զոր այժմ այսբան հաստատուն կը տեսնէք, ջրով, հողով, մեծղի լիճերով և շքեղ քաղաքներով ծածկուած կը տեսնէք, սկսաւ միջոցին մէջ զառնալ, կազային միլամած մըն էր նոյնիսկ ջրածնէն աւելի թեթեւ:

— Անհաւատալի է, տէր:

— Եւ սակայն ստոյգ է Մորկան:

— Քանի՛ որ բողբ գոք էք, կը հաւատամ իայց ի՞նչպէս օգոյ պղպղակ մը հաստատուն մտորակի կը վերածուի:

— Բացատրութիւնը դժուար չէ: Ինչպէս ըսի, երկիրս նախապէս օգոյ հսկայ փամփօշտ մըն էր կը դառնար արեւուն շուրջը և ինքն իր վրայ: Այս անգաղբում կնկնաշարումը, թերեւս հազարաւոր տարիներու ընթացքին, այնպէս մ'որաւ որ սկսաւ խտանալ ու տաքնալ: Զերմութեան զօրանալը, երկտրականութեան ազդեցութիւնը, բնութեան՝ բազմապատիկ ու զանազան ուժերու գործունէութիւնը, որոնք՝ կրնանք ըսել թէ իրարմէ կը ծագին, բազմազան նիւթեր ստեղծեցին, ինչպէս թթուածին, ջրածին, անթամին բորակածին, կայծքար, երկաթ, ստաիօն, բնալեզ, և այլն: Բոլոր այս նիւթերը իրարու խառնուելով, կարճ ժամանակի մէջ, բունկեցան և այրեցան: Ահաւասիկ ուրեմն միգամածը փոխուած կրակէ գունտի մը:

— Ապշեցուցիչ բան է, պոռաց Պարթըն՝ որ շատ ուշագրութիւն կը գնէր այդ օգտաւէտ գասին:

— Զարմանալի, բայց բնական է, ըսաւ երկրաշարժը: Այս հրաշէկ կոյտը՝ թերեւս հազարաւոր ու հազարաւոր տարիներ թափառեցաւ մէջոցին մէջ և որուն սոխորական կազմութիւնը կը թուի թէ՛ 270 աստիճան զէքոյէն վար եղած չըլլայ:

— Ըսել է թէ՛ սառած միջնորտէն աւելի միջոցի մը մէջ:

— Այո՛, երաստիճ սառած միջոցի մը մէջ: Ի՞նչ պիտի պատահէր: Պաղիլ, այնպէս չէ՞:

— ձիչք է, ըսաւ Պարթըն:

— Արով հրախոս կոյտը սկսաւ դանդաղ պաղիլ, և թթուածինը, ջրածինը, ու ստաիօնը ջուրի փոխւեցան:

— Զուրի՞ ըսիք, հարցուց Մորկան:

— Միթէ՛ հրա՞ջք է, ծոփը ալ թթուածինէ, ջրածնէ և ստաիօնէ կազմուած չէ՞:

— Իրաւունք ունիք, տէր:

— Աւրեմն, կրակէ այդ կոյտը սկսաւ կամաց կամաց պաղիլ, կամարին ու ջրոտ կոյտ մ'եղաւ, շուտով մը այդ գունտը կեղեւ կապեց: Անտարակոյս, կրակին, կեղեւին և ջուրի կոյտերուն միջեւ կոխը սարսափկլի եղաւ: Ո՞վ գիտէ քանի՞ անգամ այդ կեղեւը պատռեցաւ, ո՞վ գիտէ քանի՞ անգամներ գունտին մակերեսովը բոցեր ժայթքեցին, ո՞վ գիտէ ի՛նչ զարճուրի շարժեր տեղի ունեցան, ինչպիսի՛ թաթառներ, ինչպիսի՛ դղրղիւններ, գոռու մներ օդը սարսեցին: Սալայն, այսօր աւրուող կեղեւը, վաղը նորէն ձեւացաւ, մեծցաւ դիմադրեց, ու շարունակեց աճիլ, կրակին յաղթեց ու ձեւացաւ մեր տեսած ներկայ հաստատուն երկիրս, որ հակառակ իր կեղրոնին մէջ պահուած կրակի ժայթքումներուն կը մնայ անասան:

— Զարմանալի է, գոչեց Մորկան:

— Անհաւատալի է, ըսաւ Պարթըն:

— Սակայն յստակ է, ըսաւ Սըր ձօն:

— Նախկին կնկնածնները ի՛նչպէս ձեւացան, հարցուց մեքենավարը:

— Թերեւս աւելի պարզ կերպով: Այլեւ այս նիւթերու խառնուրդը յառաջ բերաւ՝ լոսերը, սէղերը, օղակաւորները, կակղամորթերը, բուստերը, սօդունկները, քարամոյրերը, ասոնք նախադարեան շրջանին մէջ էին: Նախադարեան շրջանին յաջորդեց սելուրեան դարը, և այս անուշայարները յաջորդաբար եր-

թաւով զարգացան՝ մինչև որ աճառոտ ձկներ երեւան եկան, յետոյ երկակենցաղները, բայց զրեթէ ամեն անկարող շարժելու: Անցան ուրիշ հազարաւոր տարիներ և այս կենդանիները կատարելագործուեցան, զարգացան, բաժնուեցան: Երբորդակ զարու մէջ՝ արդէն թռչունները կը թռչէին, օձերը՝ սաքերին կորսնցուցած կը սողային: Այս անասունները աւելի եւս զարգացան, բաժնուեցան, և ստորաբաժնուեցան, եկան նոյն կենդանիներ, կապիկը, օրանկու- թան և այլա մարդը:

— Կրճճ Կրճճ, գոչեց Պարթըն Մենք ուրեմն կապիկէ՞ մը կը սեռինը:

— Կը հասկցուի:

— Երբեք չէի իմացած:

— Հիմայ այլ եւս այդպէս պիտի չըսես: Թէ որ կը հաւատար, գոչեմք աչքերնիս ու քնանամք: Եսայ յոգնած կը զգամ ինքզինքը:

Շոգեմակոյի զարձան ձանկոցները առնելու համար, և ջրվէժէն քիչ հեռու իրարու քով պառկեցան:

Իսպաղ քուն չկրցան քնանալ: Յանդուզն առնականերու բաղնախիւ խմբակներ, թերեւս կերակուրի հատէն հրապուրուած, ստէպ յարձակեցան բանակաւորին վրայ՝ առանց վախնալու կրակէն որ կը միշտ կը վառէր Ս'Քոնոր՝ շատ անգամ քստիպուեցաւ սաք ելլել և սարձանակով կրակել: Պարթըն կ'ելլէր խոշոր սանը հակառակ՝ կը զարձնէր որպէսզի այդ վայրագ կրճոցներով չի լեցուէր շարունակ:

Յաջորդ օրը, տանուչորս ժամ յունին յետոյ, լեցուցին տակառները անոյշ ջրով, ու նաև մանկելով սկսան գետի վեր ելլել որ երթալով կը նեղնար:

Դեակները բոլորովին փոխուած էր: Եսայ զմտնչնաւոր օրարեսպետուն յաջորդած էին՝ այլանդակ, սեղսեւ, սրորի ժայռեր որոնք լամբորներուն լոյսով կը շողային: Հանգածուի շահագին կոյտերու կը նմանէին, նոյնիսկ երկրաչափը շատ անգամ շոգեմակոյի մտեցնելու սուտ աչքերովը ապահովալու համար, սակայն, ստոնք՝ նմանը շտեմուած կարծրայինը ու սարօրինակ փայլով ապառաժներ էին:

Երկու ժամէ ի վեր կ'ելլէին, երբ յանկարծ գետը դէպի հարաւ ծռեցաւ: Իրեթէ անմիջապէս, ահաւոր ազմուկ մը՝ անապին բարձրութենէ զահալիժող դեպի մը շատային նման նաւարկոյներուն սկանչին զարկաւ:

— Կեցո՛ւր, գոչեց Սըր ձօն Մորկանին:

— Ջրվէժ մը կայ, ըսաւ Ս'Քոնոր:

— Կը բեմ գայն, պատասխանեց երկրաչափը, խոնհուրութեամբ առաջ երթանք:

Դետը միշտ աւելի կը նեղնար, իսկ ջուրը սարսափելի արագութեամբ կը վազէր՝ գլուխ պտուտկող յորձանքներ ձեւացնելով, գորտնք՝ սակայն շոգեմակոյի դիւրութեամբ կը կտրէր կ'անցնէր: Սըր ձօն ցոռկին վրայ նստած ճամբան կը լուսաւորէր լողտերը բաւական բարձր բռնելով:

Շառաչը շատ երագ կը մօտենար ու քիչ ատենէն աչքան մտեցաւ որ, երկրաչափը և ընկերները գլուխին վեր առին իրենց վերեւ կարծելով:

— Շոգեղանակը գոցէ՛ Մորկան, գոչեց յանկարծ Ս'Քոնոր:

Յուսկէն հարիւր մեղր անդին, ջրի ահագին սիւնակ մը կը թաւալէր գետին մէջ՝ տեսակ մը ամոց բարձրաձնելով որ կը փայլիլէր լողտերներու շոգեմակոյ ներքեւ:

Այդ ջուրերուն մէկ մասը կը թափէր Հուսաֆար ին զնացած գետին մէջ, իսկ միւս մասը կ'իջնէր դէպի հարաւ, հարաւ-արեւմուտը:

Ահագին ժայռերէ ձեւացած տեսակ մը պատ- նէջ կը բաժնէր երկու գետերը:

— Ս'Քոնորն պիտի բռնենք, հարցուց Ս'Քոնոր, որ գեղը ձեռք առած էր:

— Հարաւ, հարաւ արեւմտեանը, ըսաւ Սըր ձօն, ու չի ուշով իր ուղեգիրը գլուխէն ետքը: Յառաջ Մորկան:

Գետ հրամանը չէր լինուցած՝ աստիկ զարմացմամբ երեսը զարձուց: Սոյոյ հասանք մը գինը փայտայած էր, բայց ա'յնքան յուշիկ, ա'յնքան մեղմ՝ որ կարծեց թէ հոխար մը կը շարժէին:

— Ս', գոչեց, ս'ի է նոյնարողը:

— Հոխար, պտուց Պարթըն ոչ նուազ սողած:

— Այո՛, մէկը կ'անակէս հո'անար շարժեց:

— Անկարելի է: Բայց... լուսնիս:

Սոյոյ մէջ տարօրինակ շշուէն մը լուսեցաւ:

Ամէրն այլ աչքերնին վեր առին ու տեսան՝ խաւարին մէջ գեղնորակ լուսաւոր կէտերու վազիլը:

— Թռչուններ, գոչեց Սըր ձօն:

— Գիշերային թռչուններ աւելցուց Մորկան:

— Բայց ուսիկ՞ կու գան, հարցուց խառնածինը միշտ աւելի աղչած:

— Յուսամ թէ քիչ ատենէն կը հասնանք:

Յառա՛ջ:

Մորկան՝ անապարեց մերենային քով վազեց: Շոգեմակոյի պտուտակէն մուտած՝ մ'աւ նոր գետին մէջ որ բաւական երագ կը վազէր սղմուած երկու բարձր ափերուն մէջ, որոնց վրայէն կը թափէին շատ մը ջրվէժներ: Յիսուն մեթր երթալէն յետոյ Սըր ձօն, ամուսին ինայիլ ուղեւով որ բաւական քիչցած էր, կրակը մարել տուաւ:

Գետը այդ պահուն սկսեւ էր լայնալ և բաւական խորտարար էր: Մերթ ընդ մերթ կ'երեւնային քարաժայռեր որոնց վրայ կը աւանտէին՝ խոշոր, կտր ու գեղնորակ թերեքով բաղնախիւ թռչուններ: Եւ նոյնիսկ ատենցմ. սմանք, բաւական խոշոր, կտր ու հաստատուն կտուցով մը գինուած թռան շոգեմակոյի վրայ ու մի քանի հատը աննցմէ ջանացին բոցնել կանթեղներուն մետաղէ ցանցերը:

Պարթըն և Ս'Քոնոր, որոնք թարմ մախ խոտով- ծի մը սաստիկ կըրտարագէին, շատ աշխատեցան աննցմէ բռնել, բայց չյաջողեցան:

Ժամ մը յետոյ, Հուսաֆար բարձր ժայռերէ ձեւացած սուր անկիւն մը կը դառնար, և անմիջա- շարժութեամբ լնով լի, թարմ օդի շունչ մը զգալի եղաւ:

— Ո՛հ, բացազանց խառնածինը՝ լիաթոք ջնեւով: Ուսիկից կու գայ այս կենսատու օդը:

— Պէտք է որ բացուածք մ'ըլլայ ըսաւ Սըր ձօն:

— Տէ՛ր, տէ՛ր, գոչեց Ս'Քոնոր, ինչ կը տեսնես...:

— Ի՞նչ կը տեսնես, պտուցին միաձայն Սըր ձօն, Մորկան և Պարթըն:

— Հո՛ն, հո՛ն, հոն նայեցէ՛ք... ցոռկին ուղղու- թեամբ:

Երբք միասին իրանտացոյն ցոյց տուած ուղղութեամբ նայեցան երբեակ ազազակ մը բրդաւ աննց կուրծքէն:

— Արե՛ւը, արե՛ւը:

Վայրկեան մը յետոյ՝ Հուսաֆար գետը ձգելով կը մտնէր հրաշայի լճի մը մէջ, որուն վրայ կ'իջնէր արեւու փայլուն ճառագայթ մը: